գարյանը, Ս. Հարությունյանը, Բ. Գեորգոյանը, Ա. Հովսեփյանը, Ա. Սաղումյանը, Վ. Առաքելյանը և շատ ուրիշներ։

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին «Ֆրանսիական կոմպարտիայի հայկական սեկցիայի գործունեությունը դիմադրության շարժման տարիներին» զեկուցումը։ Զեկուցող Տ. Դրամբյանը հակիրճ, բայց համոզիչ փաստերով ավելց ֆրանսիական կոմպարտիայի հերոսական գործունեությունը դիմադրական շարժման և Ֆրանսիայի ազատագրման պայքարում։ Ապա ֆրանսիական ազգայիների հիման վրա լուսաբանեց այդ պայքարում իր արժանի ավանդը ներդրած հայկական սեկցիայի և նրա գլխավորությամբ ստեղծված հայ ազգային հատկատի և հայրենասեր հայ երիտասարդական միության կազմակերպության գործունեությունը։ Զեկուցման մեջ հատուկ բաժին էր հատկացված Ֆրանսիայում գործող առաջին պարտիզանական հայկական գեղի գործունեությանը։ Զեկուցողը միաժամանակ մերկայացրեց «Դաշնակցություն» կուսակցության հակաժողովրդական վարքագիծը համաշխարհային երկրորդ պատերազմում և հատկապես Ֆրանսիայի ազատագրման գործում։

«Հայրենական մեծ պատերազմի պատմագրությունը» թեմայով հետաքրքիր զեկուցում կարդաց պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանը։ Զեկուցողը քննության առավ Հայրենական մեծ պատերազմի պատմության վերաբերյալ Սովետական Միությունում հրատարակված մի շարք մենագրություններ, փաստաթղթերի բազմաթիվ ժողովածուներ, հոդվածներ և այլն։ Հրատարակված պատմագիտական ողջ գրականությունը նա բաժանեց երկու մասի՝ մինչև ՍՄԿԿ XX համագումարը և այդ համագումարից հետո հրատարակված աշխատություններ։

Զեկուցման մեջ հատուկ տեղ էր հատկացված սովետահայ պատմագրությանը։ Խ. Բարսեղյանը նշեց, որ սովետահայ պատմաբանների այդ աշխատություններում «բացահայտվում է Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը, պատմվում են կարմիր բանակի հայկական առանձին զորամիավորումների, դիվիզիաների մարտական գործողությունների, հայ պարտիզանների, Եվրոպայի երկրների օկուպացված շրջանների ժողովուրդների դիմադրական շարժմանը հայերի ցուցաբերած մասնակցության, թիկունքի հերոսական աշխատանքի, ռազմաճակատում Հայաստանի զավակների կատարած քաջագործությունների, պատերազմի ժամանակ սովետական հայրենիքի պաշտպանությանը սիյուռքահայերի ցույց տված «գնության մասնակցության մասին»։

Նստաշրջանում ուշագրավ հուշերով հանդես եկավ Մոսկվայի պաշտպանության և Արևմտյան Պրուսիայի համար մղված մարտերի ակտիվ մասնակից գեներալ-մայոր Հայկ Մարտիրոսյանը։

Հոբելյանական նստաշրջանն ամփոփեց պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Դալոյանը։

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Սովետական Հայաստանի աշխատավորությունը երախտագիտության խորին զգացումով նշեց իր մեծանուն դավակներից մեկի՝ բազմավաստակ հայագետ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան հարյուրամյա տարելիցը։ Մայիսի 25-ին հանդիսավոր նիստ տեղի ունեցավ Ալեքսանդր Օպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, կուսակցության և կառավարության ղեկավարների, մտավորականության, աշխատավորների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մկրտիչ Ներսիսյանը։ Նա նշեց այն խոշոր դերը, որ խաղացել է Մանուկ Աբեղյանը հայագիտության և հայկական մշակույթի զարգացման գործում՝ 20-րդ դարի առաջին հիսնամյակում։ Բազմակողմանի, բեղմնավոր ու արդյունավետ է եղել մեծանուն գիտնականի և սկզբունքային ու անաչառ քաղաքացու գործունեությունը։

Մանուկ Աբեղյանը հսկայական աշխատանք է կատարել,— ասում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը,— հայոց լեզվի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մշակման ուղղությամբ, քննել և պարզաբանել աշխարհաբար լեզվի հնչյունական համակարգի, շարահյուսության ու տեսության բազմապիսի խնդիրներ։ Ժամանակակից հայոց լեզվի քերականությունը նրա ստեղծագործ ջանքերի արդյունքն է հանդիսանում։ Մանուկ Աբեղյանի հայացքը սևեռված է եղել միշտ դեպի նորը, առաջադիմականը, որին ծառայել է նա իր գիտական օբյեկտիվությամբ, սկզբունքայնությամբ, երկաթյա տրամաբանությամբ և գիտելիքների անօրինակ պաշարով։

Մանուկ Աբեղյանը գիտական գործունեությունը զուգակցում էր մանկավարժական ու հասարակական բեղուն գործունեության հետ։ Երկար ժամանակ նա դասավանդել է միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում, հողեոր սնունդ ու կրթություն տվել բազմաթիվ երիտասարդների, որոնք հետագայում իրենց արժանի տեղը գրավեցին մեր մշակութային ու հասարակական կյանքում։ Մանուկ Աբեղյանը դեկավարել է Սովետական Հայաստանի մի շարք ուսումնական ու գիտական հաստատություններ, գործել՝ միշտ կապված իր ժողովրդին, նրա իղձերին ու ցանկություններին։

Այնուհետև, Մանուկ Աբեղյանի կյանքի ու գործունեության մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Արամ Ղանալանյանը։

—Լայն է ու ընդգրկուն Մանուկ Աբեղյանի գրական, գիտական, հասարակական ու մանկավարժական գործունեությունը՝ քննադատություն, հրապարակախոսություն, ուսուցչություն, դասախոսական աշխատանք, բանագիտություն, քերականագիտություն, գրականագիտություն և այլն, բնագավառներ, որոնց նա նվիրել էր իր գիտակցական ողջ կյանքն ու էությունը, իր մտքերն ու զգացմունքները, ոգորումներն ու տվայտանքները, միշտ հարազատ դարաշրջանի ոգուն ու պահանջներին, ժողովրդի իղձերին ու ակնկալություններին։

Բնատուր մեծ տաղանդը, ստեղծագործական անժխտելի կարողությունները Մանուկ Աբեղյանի մոտ զուգակցվում էին անսպառ եռանդով, անօրինակ աշխատասիրությամբ, տարիների ընթացքում կուտակած գիտելիքների հսկայական պաշարով և այնպիսի ունակությամբ, որը նրան հնարավորություն էր տալիս բացահայտելու և պարզաբանելու երևույթների և իրերի էական առանձնահատկությունները, համադրելու դրանք։ Նրա գիտական հետաքրքրություններն ընդգրկում էին մեր հնադարյան անցյալից մինչև ներկան ընկած ժամանակաշրջանը, մեր վաղընջական առասպելները, գողթան երգերն ու նոր շրջանի վեպերը, ժողովրդական խաղիկները, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու ստեղծագործությունները և Հովհաննիսյանի, Թումանյանի ու Չարենցի գրական ժառանգության կարևոր հարցերը, գրաբարի և աշխարհաբարի քերականության հարցերը։ Եվ ամենուր նա կատարում էր գիտական խոշոր ընդհանրացումներ, հայտնագործություններ, որոնք առաջ էին մղում գիտությունը։

Չի կարելի խոսել մեր ժողովրդական աշխարհահռչակ էպոս «Սասունցի Դավթի» մասին, մեր հնագույն հավատալիքների ու առասպելների մասին, ժողովրդական բանահյուսության հիասքանչ կտորների մասին առանց հիշատակելու Մանուկ Աբեղյանի անունը, առանց այն գիտակցության, որ անգնահատելի է Մանուկ Աբեղյանի վաստակը դրանք գիտական խոր մշակման ենթարկելու գործում։

Ստեղծագործական հարուստ ու գիտական խոշոր նշանակություն ունեցող իր ժառանգությամբ Մանուկ Աբեղյանը արժանավայել տեղ է գտել հայ մշակույթի գործիչների կաճառում, իբրև գիտնական և հայրենասեր, որն իր գիտակցական ողջ կյանքը նվիրաբերել է հարազատ ժողովրդին ու հայրենիքին անշահախնդրորեն ծառայելու ազնիվ նպատակին։ Սերունդները երախտագիտությամբ կհիշեն մեծանուն և բազմավաստակ հայագետին։

Հանդիսավոր նիստից հետո տեղի ունեցավ Ճոխ համերգ հանրապետության արտիստական լավագույն ուժերի մասնակցությամբ։

* * *

Մայիսի 21-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված Մանուկ Աբեղյանի ծննդյան հարյուրամյակին։ Ժողովը բացեց պրեզիդենտ՝ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը «Մ. Աբեղյանը որպես բանագետ-գրականագետ» և ԳԱ թղթակից-անդամ Է. Աղայանը «Մ. Աբեղյանի լեզվաբանական ժառանգությունը» թեմաներով։

* * *

Մատենադարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստը՝ նվիրված Մ. Աբեղյանի ծննդյան 100-ամյակին, տեղի ունեցավ մայիսի 22-ին։ Նիստը բացեց Մատենադարանի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը։ Զեկուցումներով հանդես եկան պատմական գիտությունների դոկտոր Ա. Մնացականյանը («Աբեղյանը և գուսանա-ժողովրդական քնարերգության խնդիրները»), բանասիրական գիտ. թեկնածու Ս. Հարությունյանը («Աբեղյանի հայ վիպական բանահյուսության տեսությունը»), բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մարտիրոսյանը («Աբեղյանը և հին գրականության պատմության պարբերացումը»)։ Վերջում Մ.

Աբեղյանի մասին իրենց հուշերը պատմեցին ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը, ԴԱ թղթակից-անդամ Ա. Ղասալանյանը, Մ. Ավդալբեգյանը և Ա. Սրապյանը։

* * *

Մայիսի 28-ին կայացավ ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Մանուկ Աբեղյանի ծննդյան հարյուրամյակին, որը բացեց ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Հովնանը։ Կարդացվեցին զեկուցումներ հետևյալ թեմաներով՝ «Մ. Աբեղյանի ժառանգության մի քանի հարցեր» (զեկ. բան. գիտ. դոկտ. Խ. Սարգսյան), «Մ. Աբեղյանը և հայ նոր գրականության պարբերացման հարցը» (զեկ. բան. գիտ. թեկ. Ս. Սարինյան), «Մ. Աբեղյանը և հայ տաղաչափության ուսումնասիրության հարցերը» (զեկ. բան. գիտ. թեկ. Էդ. Ջրբաշյան), «Մ. Աբեղյանը և բառարանագիտությունը» (զեկ. բան. գիտ. թեկնածու Գ. Գասպարյան) և «Գեղարվեստականության հարցը Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության մեջ» (զեկ. բան. գիտ. թեկնածու Մ. Ավդալբեգյան)։